

ԿՐԹԻԱԾ ԳԻՒՂԱՑԻՆ

ՆՊԱՍՏ ԳԻՒՂԱՏՆՏԵՍ ԻՆՏԵՆԻԳԵՆՅԻԱԾԻ ԽՆԴՐԻՆ

Մի ազդեցիկ կազմող բոլոր դասակարգերը սնհրաժեշտօրէն պէտք է ունենան օրգաններ, որոնցով նոքա սերտ կ'ընդունեն կապուել կարողանան այդ ազդի ոգին ու միտքը մշակող և պահպանող տարրի հետ: Այդ օրգաններով պէտք է միտքը թափանցի ազդի ամենահեռաւոր խաւերը, և հէնց այդ օրգանների միջոցով է որ հնարաւոր է այդ հեռաւոր խաւերի զգացումների ու կարիքների մասին տեղեկութիւն հասցնել ազդի մտքի կենտրոնները:

Երկրագործ դասակարգը մեզնում ոչ միայն բազմաթիւ է, ոչ միայն նա ամենախոշոր մասն է կազմում մեր ազգի, այլ և նորա գոյութիւնն է մեր ազգին տալիս ապագայ ունեցող ազգերի լուրջ կերպարանքը: Նա ճակատագրական դեր է կատարել անցեալում, կատարում է այսօր և կուլած է կատարելու ապագայում:

Ահա այդ ընդհանուր շահերի համար է, որ մենք արժարձեցինք անցեալ տարի զիւղատնտեսական ինտելիգենցիայի խնդիրը: Մեր միտքը այն է, որ մեր հողագործ դասակարգը ունենայ իւր յատուկ կրթւած հողագործ, զիւղատնտես ինտելիգենցիան, իբր կապող օղակ հողագործ մեծ դասակարգի և ընդհանուր ազգային ու գործնով համամարդկային ինտելիգենցիայի մէջ: Ենթահիւ այդ օրգանի՝ զիւղատնտեսութիւնը մեզանում կը գնէր աւելի լաւ հիմքերի վրայ, գիւղացի հողագործ դասակարգը կը կապէր զիտութեան հետ մի կողմից և մարդկութեան մտաւոր հոսանքների հետ—միւս կողմից: Մենք այսպէս ենք մտածում, որ մեր գիւղական ինտելիգենցիան պէտք է կազմուած լինի ոչ թէ միայն զիւղում բնակողներից աս հասարակ, այլ որ գիւ-

ղում բնակող ինտելիգենտները իրանք մեծ մասամբ զիւղատնտեսական պարապմունք ունենան, նոքա լինեն միաժամանակ զիւղատնտեսութեան ներկայացուցիչներ, և դորանով իսկ լինեն իսկական ու բնական ներկայացուցիչներ զիւղական ազդարնակութեան մեծամասնութեան:

Մենք սովոր ենք զիւղում ինտելիգենցիայի ներկայացուցիչներին որոնել յանձին տեղական դպրոցի ուսուցիչների, եթէ միայն այդ զիւղում դպրոց կայ, և յանձին տեղական քահանաների, եթէ միայն վերջիններս կրթւած անձնաւորութիւններ են:

Բայց կարելի է արդեօք մեծ յոյսեր դնել այդ երկու տարրերի վրայ այն դերի նկատմամբ, որ պէտք է յատկացնել զիւղական ինտելիգենցիային? Բնական է որ մեծ յոյսեր դնել նոցա վրայ պէտք չէ, այլապէս մենք ապագայում սոխիւած կը լինենք խոստովանել, որ մենք մեր հաշիւների ու մեր յոյսերի մէջ սխալւած ենք եղել: Մեր դպրոցների թիւը շատ քիչ է մեր զիւղերի թւի համեմատութեամբ և, բացի դորանից, ուսուցիչները մշտաբնակ մարդիկ չեն: Բայց որ ամենազլլաւորն է, երբէք ուսուցիչը չի կարող այն կուրը մղել հասարակութեան մէջ, որքան կարող է նոյն ուսման և զարգացման տէր անկախ գործիչը, նոյն զիւղական համայնքի, նոյն զիւղական հասարակութեան անդամը: Ուսուցիչը կոչւած չէ տեղական ամեն ինդիւիդուսի համար կարծիք յայտնել, նա կոչւած չէ զիւղական ամեն ինդիւիդուսի խառնել, նա այդ կարող է անել միայն որոշ և համեստ չափերով. նորա իսկական կոչումը սահմանափակումներ է դնում նորա գործունէութեանը, սահմանափակումներ, որոնք գոյութիւն չունին համայնքի հաւասարազօր անդամների համար:

Գիւղական քահանան, ճիշդ է, մշտաբնակ է, սերտ կապերով կապւած է զիւղական համայնքի հետ. ուսեալ քահանան կարող է մեծ ծառայութիւններ մատուցանել իւր հասարակութեանը, եթէ նա, իբր անձնաւորութիւն, ընդհանուր չարդ վայելի այդ հասարակութեան կողմից: Բայց քահանան ունի իւր պարտադիր պաշտօնը, և, իւր ապրուստով կապւած լինելով նոյն հասարակութեան հետ, և միւս կողմից՝ կապւած լինելով հողերի իշխանութեան հետ, բնական է որ նորա գործունէութիւնը չի կարող այն ազատ բնաւորու-

Թիւնը կրել, ինչ ազատ բնաւորութիւն որ կարող է կրել համայնքի անկախ անդամների գործունէութիւնը:

Բայց և անկախ այդ հանդամանքներից, քահանաների թիւը ցանկալի է անհրաժեշտ թիւին վերածել և ոչ թէ՛ յանուն ինտելիգենցիայի, նոցա թիւը բաղձացնել:

Գորա հակառակը՝ ազատ գործող ինտելիգէնտների համար չի կարող որ և է թիւ սահմանել: Գոցա համար կարելի է ասել, որ նոցա թիւ սահմանը հէնց ինքը համայնքների բնակիչների թիւ սահմանն է, իսկ նոցա գործունէութեան ասպարէզը այնքան է, որքան նոցա մտաւոր ու բարոյական շնչը կարող է կարելը:

Սա ինքն ըստ ինքեան հասկանալի բան պիտի լինէր, որ ամեն մի հասարակութիւն, լինի նա քաղաքի թէ գիւղի, ինքն իւր միջից պէտք է իւր ինտելիգենցիան բուսցնէ: Եւ եթէ գիւղի համար մի առանձին խնդիր է յարուցւում, այդ նրանից է, որ, ինչպէս յայտնի է, ինտելիգէնտ գիւղացին չի մնում՝ գիւղում, այլ ձգտում է քաղաք:

Պատճառ?

Պատճառն այն է, որ ամեն ոք ձգտում է իւր գիտեցածը գործադրել այնտեղ, ուր այդ գիտելիքը յարգւում է: Եւ որովհետեւ ընդհանրապէս աւելի բարձր, ասենք միջնակարգ, ուսումը աւելի գործադրութեան տեղ է դրնում քաղաքում, այդ պատճառով էլ միջնակարգ ուսումով երիտասարդը աշխատում է մնալ քաղաքում:

Այն, դա չէ միակ պատճառը. բայց ուսման որպիսութիւնը մեծ դեր է կատարում այս խնդրում: Հետեւապէս պէտք է կարծել որ միջնակարգ ուսման հետ եթէ գիւղական պատանիներին տուի նաև գիւղատնտեսութեան ճաշակ, այդպիսի սերնդից աւելի կարելի է սպասել ապագայ գիւղական գործիչների, քան այժմ:

Մենք շեշտում ենք միջնակարգ ուսման վրայ, որովհետեւ տարրական կամ ծխական դպրոցի ուսումը չէ որ փախցնում է երեխաներին գիւղից՝ քաղաք, այլ միջնակարգ դպրոցը: Բարձրագոյն համալսարանական ուսման մասին կանգ չենք առնում այն հասկանալի պատճառով, որ համալսարանը մասնաղէտներ է պատրաստում, իսկ մասնագիտութիւնը կապում է մարդուն որոշ գործերի, որոշ պաշտօնների հետ և ոչ թէ՛ անպատճառ գիւղի կամ քաղաքի հետ:

Համալսարանական ուսման նկատմամբ՝ գիւղի և քաղաքի խնդիր չի կարող լինել: Այն ուսանողները, որ ձգտումն են ցոյց տալիս գիւղը թողնել քաղաքի համար, առանց սակայն որոշ կոչումն ունենալու քաղաքի կեանքի համար, Կոքա գիւղացիների այն զաւակներն են, որոնք միջնակարգ դպրոցներումն են ուսանում, այն է թեմական հայոց դպրանոցներում, տէրունական գիմնազներում և ռէալական ուսումնարաններում—դպրոցներ, ուր մտնողները մեծ մասամբ ոչ թէ որոշած նպատակ ունեն ապագայում շարունակել իրանց ուսումը մասնադիտական դպրոցներում, այլ կամենում են ընդհանուր զարգացումն ստանալ:

Արդ, գիւղական ինտելիգենցիան, որպէս զի կարողանայ իւր այն դերը կատարել, նա կոչւած է կատարելու, պէտք է ունենայ ընդհանուր զարգացում: Զուտ գիւղատնտեսներ չեն հարկաւոր մեզ, այլ գիւղատնտեսներ՝ ընդհանուր զարգացումով: Այդ է ժամանակակից պահանջը:

Այս խնդրին վերադառնալու առիթը մեզ տալիս է Խրիմեան Հայրիկի բռնած դիրքը ¹⁾: Անկասկած Մկրտիչ կաթողիկոսը իւր մտքերը այդ առիթով վաղուց է արտայայտել: Գիւղի բարձր գնահատումը նա արել է մի քանի տասնեակ տարիներ առաջ, երբ նա դեռ Վարադայ վանքի վանահայր էր, և արել է ոչ միայն խօսքով, այլ և դործով: Բայց այլ զօրութիւն ունեն Հայրիկի իբր կաթողիկոսի արտայայտութիւնները: Ոչ միայն լոկ հակումներ և կարծիքներ, այլ իշխանաւորի դիտաւորութիւններ են Կոքա: Իսկ այդ դիտաւորութիւնը սա է՝ կապել էջմիածնի ճեմարանական ուսումը գիւղատնտեսական զբաղմունքների հետ հմուտ գիւղատնտեսի ղեկավարութեամբ, զբաղմունքների որոնց համար վերին աստիճանի յարմար հանգամանք է ներկայացնում էջմիածնի ընդարձակ Ֆերման:

Դա մի նոր և ուժեղ զարկ է գեւղատնտեսական ինտելիգենցիայի խնդրին, մի զարկ, որ մենք բոլոր սրտով ողջունում ենք:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ:

¹⁾ Տես «Մուրճ»-ի սոյն համարում Հայրիկի արտասանած ճառը: